

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ 3-Ա-7-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 2-Ն որոշմամբ կատարված փոփոխություններն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով) և 3-րդ մասի (նորմատիվ իրավական ակտում լրացումներ կատարվում են դրանում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ, նախադասություններ, բառեր, թվեր կամ կետադրական նշաններ լրացնելու միջոցով) դրույթներին:

Որոշման դրույթներում «համաձայն» բառից հետո նշված «հատված 1», «հատված 2», «հատված 3», «հատված 4», «հատված 5» բառերն ու թվերը համապատասխանաբար փոխարինել «հավելված 1», «հավելված 2», «հավելված 3», «հավելված 4» և «հավելված 5» բառերով ու թվերով:

Որոշման հավելվածների (հատվածների) վերևի աջ անկյուններում անհրաժեշտ է նշել «Հավելված 1 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 2-Ն որոշման», «Հավելված 2 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 2-Ն որոշման», «Հավելված 3 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 2-Ն որոշման», «Հավելված 4 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 2-Ն որոշման», «Հավելված 5 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 2-Ն որոշման» գրառումները:

Թիվ 3-Ա որոշումը պարունակում է նորմատիվ բնույթի դրույթներ, հետևաբար որոշման հերթական համարից հետո նշված «Ա» տառն անհրաժեշտ է փոխարինել «Ն» տառով:

Որոշման հավելվածի վերևի աջ անկյունում անհրաժեշտ է նշել «Հավելված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 3-Ա որոշման» գրառումը:

Որոշմամբ հաստատվել է համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվել է միայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը:

Թիվ 4-Ա որոշման նախաբանում կատարված հղումը սխալ է: Անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու

2019 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 46-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան կետին:

Թիվ 5-Ա որոշման նախաբանում նշված <<286>> թվից հետո ավելացնել «որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի»: Բացի այդ, ընդլայնման նպատակով օտարվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները (հողատեսքերը) չեն համապատասխանում օտարման նպատակին (ջերմոցային տնտեսության կառուցապատում, հիմք՝ ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ և 13-րդ հոդվածներ, ՀՀ կառավարության 29.06.2017թ. N 757-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելված):

Որոշման մեջ նշված չեն ընդլայնման նպատակով ուղղակի կարգով օտարվող գյուղատնտեսական նշանակության հողերի որակական հատկանիշները (հողի կարգ, ջրովի/անջրդի), այդ իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն տալ հողամասերի վաճառքի գների ՀՀ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ:

Թիվ 6-Ա որոշման բովանդակության մեջ փոփոխություն կատարվող իրավական ակտի լրիվ անվանումը գրառված չէ: Բացի այդ, որոշման դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 7-Ա որոշմամբ կատարված փոփոխությունները ճիշտ չեն գրառված:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
03.03.2020թ.